ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 535-Ա

«23» ապրիլի 2025 թվականի գյուղ Ախուրյան

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ (ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ) ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերի դրույթներով որոշում եմ՝

1. Հաստատել բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում անշարժ գույքի (գյուղատնտեսական նշանակության հողի) ընդհանուր համատեղ սեփականության կամ վարձակալության (օգտագործման) դեպքում, անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) կողմից ներկայացվող գրավոր համաձայնության ձևանմուշը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ պետական համակարգի այլ մարմնին փոխանցելու համար համաձայնության ձևանմուշը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Հաստատել բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարության ձևանմուշը՝ միևնույն հողակտորի վրա նույն նպատակի համար պետական օժանդակության այլ ծրագրերից չօգտվելու մասին տեղեկացված լինելու վերաբերյալ՝ համաձայն հավելված N 3-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԽԱՆՈՒԿՅԱՆ

«23» ապրիլի 2025 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2025 թվականի մարտի 23-ի թիվ 535-Ա որոշման

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում անշարժ գույքի (գյուղատնտեսական նշանակության հողի) ընդհանուր համատեղ սեփականության կամ վարձակալության (օգտագործման) դեպքում, անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) կողմից ներկայացվող

Մենք՝ ներքո ստորագրողներս, Ախուրյան համայնքի _____ բնակավայրում գտնվող _____ կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողի համասեփականատերերս՝

_____
(անուն, հայրանուն,ազգանուն, անձնագրի համար, երբ և ում կողմից տրված)

_____
(անուն, հայրանուն,ազգանուն, անձնագրի համար, երբ և ում կողմից տրված)

_____
(անուն, հայրանուն,ազգանուն, անձնագրի համար, երբ և ում կողմից տրված)

_____
(անուն, հայրանուն,ազգանուն, անձնագրի համար, երբ և ում կողմից տրված)

տալիս ենք համաձայնություն առ այն, որ մեր համատեղ (բաժնային) սեփականություն հանդիսացող հողամասը փաստացի օգտագործի _____:

Համասեփականատերեր՝ _____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Հողամասի փաստացի օգտագործող՝ _____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Հաստատում եմ՝
_____ համայնքի (բնակավայրի վարչական) ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

____ _____ 2025թ. Կ.Տ.

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 535-Ա որոշման

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ պետական համակարգի այլ մարմնին փոխանցելու համար

Ես՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի _____ բնակավայրի բնակիչ

_____

(դիմումը ներկայացնող քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(անձնագրի համարը, երբ և ում կողմից է տրված)

տալիս եմ իմ համաձայնությունը, որ բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում իմ մասին տեղեկությունները նախարարությանը կամ պետական համակարգի այլ մարմնին փոխանցելու համար:

_____ _____

(անուն, հայրանուն, ազգանուն) (ստորագրություն)

____ _____ 2025թ.

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 535-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագրի շրջանակներում միևնույն հողակտորի վրա նույն նպատակի համար պետական օժանդակության այլ ծրագրերից չօգտվելու մասին տեղեկացված լինելու վերաբերյալ

Ես՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի _____ բնակավայրի բնակիչ

_____

(դիմումը ներկայացնող քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(անձնագրի համարը, երբ և ում կողմից է տրված)

հայտարարում եմ, որ տեղեկացված եմ միևնույն հողակտորի վրա նույն նպատակի համար պետական օժանդակության այլ ծրագրերից չօգտվելու մասին:

_____ _____

(անուն, հայրանուն, ազգանուն) (ստորագրություն)

____ _____ 2025թ.